ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

Քաղ. Երևան 20 հոկտեմբերի 2020 թ.

Սահմանադրական դատարանը, գործելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի, 69-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի հիման վրա,

մասնակցությամբ դատավորներ Է. Շաթիրյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի և Ա. Խաչատրյանի,

քննության առնելով Գևորգ Մարգարյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Գևորգ Մարգարյանը (ներկայացուցիչ՝ Նարինե Աբելյան) 2020թ. սեպտեմբերի 22-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածով նախատեսված կարգավորումներն այնքանով, որքանով դրանք չեն նախատեսում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու աննպատակահարմարության պարագայում տվյալ բաժնի՝ հրապարակային սակարկություններով վաճառքի դրույթ՝ ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի դատական կազմի նախագահողի միջնորդությունը՝ լրացուցիչ ուսումնասիրություն կատարելու նպատակով սույն դիմումի նախնական ուսումնասիրության ժամկետը երկարաձգվել է մինչև 2020 թվականի հոկտեմբերի 20-ը ներառյալ:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 6-րդ մասը՝ այնքանով, որքանով չի նախատեսում ընդհանուր բաժնային սեփականության սեփականատիրոջ բաժինը հրապարակային սակարկություններով վաճառելու հնարավորություն, հակասում է Սահմանադրության 1-ին, 3-րդ, 60, 61, 63, 75, 78, 80 և 81-րդ հոդվածներին:

Դիմողի կարծիքով՝ դատարանները, գնահատելով Քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-5-րդ կետերով նախատեսված իրավական հնարավորությունները, դրանց բացակայության դեպքում ստիպված են լինում ամբողջ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու վերաբերյալ դատական ակտ կայացնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածն այլ կարգավորում չի նախատեսում:

Դիմողի կարծիքով՝ նման կարգավորումն անտրամաբանական է, խախտում է բաժնային սեփականության մյուս համասեփականատերերի սեփականության իրավունքը, քանի որ վերջիններս հանիրավի զրկվում են իրենց սեփականությունից: Մինչդեռ գնելու նախապատվության իրավունքն իրացնելը (դրանից հրաժարվելու եղանակով) չի կարող անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջացնել, քանի որ իրավունքի իրացման տրամաբանությունն ուղղված է իրավատիրոջ կամքն ու հայեցողությունը երաշխավորելուն և ոչ թե սահմանափակելուն:

Դիմողն արձանագրում է, որ առանձնացող սեփականատիրոջ՝ իր սեփականության իրավունքն իրացնելը չի կարող գերակայել մյուս համասեփականատերերի սեփականության իրավունքի նկատմամբ, ուստի՝ վերջինս պետք է հնարավորություն ունենա տնօրինելու բացառապես իր բաժինը՝ այն վաճառելու, կտակելու, նվիրելու և այլ եղանակներով: Այլապես խախտվում է իր նախապատվության իրավունքն իրացրած անձի սեփականության իրավունքը:

4. Սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով խնդրո առարկա դիմումը և կից ներկայացված նյութերը, գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի դատավարական նախապատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմելով դատարան՝ Զոյա Ավանեսյանը պահանջել է գույքը հրապարակային սակարկություններով վաճառել: Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ամալյա Վարդանյանը պահանջել է ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասից բաժինն առանձնացնել:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.11.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.04.2017 թվականի որոշմամբ Գևորգ Մարգարյանի և Ամալյա Վարդանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.11.2016 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.12.2019 թվականի վճռով սկզբնական և հակընդդեմ հայցերը բավարարվել են:

Վերաքննիչ դատարանի 23.03.2020 թվականի որոշմամբ Գևորգ Մարգարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.12.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.06.2020 թվականի որոշմամբ Գևորգ Մարգարյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է և սահմանվել է ժամկետ՝ վճռաբեկ բողոքի թերությունը շտկելու և այն կրկին բերելու համար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գևորգ Մարգարյանը և պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.03.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանը, քննելով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, 2020 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ արձանագրել է. «...բողոքը պետք է թողնել առանց քննության հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե չեն վերացվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները, կամ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ:

Տվյալ դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.06.2020 թվականի որոշմամբ Գևորգ Մարգարյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ տվյալ դեպքում հայցով և հակընդդեմ հայցով քննության առարկա են երկու ոչ դրամական հիմնական պահանջներ, մինչդեռ վճարված է միայն 20.000 ՀՀ դրամ, և պետական տուրքի չվճարված մասի (20.000 ՀՀ դրամի) վերաբերյալ առկա չէ միջնորդություն պետական տուրքի գծով որևէ արտոնություն սահմանելու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե (...) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ Վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ բողոքում առկա թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ սահմանված ժամկետը լրանալուց հետո վճռաբեկ բողոք բերելը, երբ բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, օրենսդիրը դիտում է որպես առանձին թերություն: Գևորգ Մարգարյանը, շտկելով վերը նշված որոշմամբ արձանագրված թերությունը, կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ այն ներկայացնելիս թույլ տալով նոր խախտում:

Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.06.2020 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ Գևորգ Մարգարյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է և սահմանվել է հնգօրյա ժամկետ որոշումն ստանալու պահից վճռաբեկ բողոքում առկա թերությունը շտկելու ու վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար: Նշված որոշումը Գևորգ Մարգարյանը ստացել է 15.07.2020 թվականին (հիմք՝ փոստային հավաստագիր), սակայն սույն վճռաբեկ բողոքն առձեռն ներկայացրել է 29.07.2020 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոքը ներկայացնելու համար վերը նշված որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո, և չի ներկայացրել միջնորդություն՝ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Այսինքն՝ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելիս թույլ է տրվել նոր խախտում:

Ինչ վերաբերում է Գևորգ Մարգարյանի 20.07.2020 թվականին փոստային առաքմամբ ներկայացրած (Վճռաբեկ դատարանի գրասենյակ մուտք է եղել 22.07.2020 թվականին) դիմումին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետը հաշվարկվում է վերստին: Նշված հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու պահանջն ուղղակիորեն ենթադրում է կրկին վճռաբեկ բողոքի (այլ ոչ թե դիմումի, միջնորդության կամ այլ փաստաթղթի) ներկայացում: Այսինքն՝ սույն վճռաբեկ բողոքը վերադարձվելու պայմաններում արձանագրված խախտումները վերաց-նելու հետ մեկտեղ Վճռաբեկ դատարան կրկին պետք է ներկայացվի վճռաբեկ բողոք, որում պետք է պահպանված լինեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածով նախատեսված պահանջները, իսկ բողոք բերած անձի կողմից ներկայացված դիմումին կից բացակայում է կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության, քանի որ բողոքը կրկին ներկայացնելիս թույլ է տրվել նոր խախտում…»:

Սույն գործի շրջանակում դիմողը պատշաճորեն չի իրացրել դատական պաշտպանության իրավունքի իրականացման օրենսդրական հնարավորություն-ները՝ արդյունքում չի սպառել դատական պաշտպանության միջոցները:

Անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջներից է նաև դատական պաշտպանության միջոցների սպառումը: Այս պահանջն ինքնանպատակ չէ և միտված է նրան, որ անձը պետք է, պատշաճորեն իրացնելով, սպառի իր ենթադրյալ խախտված իրավունքի վերականգման համար օրենսդրությամբ նախատեսված բոլոր հնարավորությունները, ինչից հետո միայն իրավասու լինի դիմելու Սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության և լուծման առանձնա-հատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական-դատական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները, ինքնանպատակ չեն և հայեցո-ղաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված) գործընթացներ, որը պայմանա-վորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով և պարտականություններով: Հետևաբար՝ դիմողը մինչև Սահմանադրական դատա-րան դիմելը պարտավորված է պահպանել այն պահանջները, որոնք նախա-տեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական

իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական նշյալ նորմի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով մանրամասնվում և կանոնակարգվում են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջները: Դրանց սահմանումն ինքնանպատակ չէ և միտված է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացման ապահովմանը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, հենվելով վերոնշյալ սահմանադրական նորմի վրա, սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան, մասնավորապես.

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը.

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները.

գ) երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած յուրաքանչյուր ոք Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Գևորգ Մարգարյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Դատավորներ՝

20 հոկտեմբերի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-54